# ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21

ք. Գյումրի «19» փետրվարի 2021 թ.

«Ընտանիք» ՄՊԱԿ ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հերմո ֆարմ» ՍՊԸ-ն, ի դեմս Հ. Հլոյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 93170 /իննսուներեք հազար հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկըներկայացվել էառանցԱԱՀ-ի, ապապայմանագրըկնքելիս «ներառյալԱԱՀ-ն» բառերըհանվումեն:*

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Ընտանիք»ՄՊՍԿ ՊՈԱԿ | «Հերմո ֆարմ» ՍՊԸ |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 | Ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1 |
| ՀՎՀՀ 05504412 | ՀՎՀՀ 05522575 |
| Հ/Հ 900018005554 | Հ/Հ 2050122054441001 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ա.Մինասյան | Հ.Հլոյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«19» փետրվարի 2021 թ. կնքված
ԸՆՏ-ՍԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| չափաբաժնի համարը | միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակն ըստ ամիսների 2 | 4 | 7 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ազոտ պարունակող պարարտանյութեր | | | | | | | | | | |
| | 24411500 | Անուշադիրի սպիրտ 10% 30մլ | Անուշադիրի սպիրտ 10% 30մլ | սրվակ | 150 | 150 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| | | Ընդամենը | | | | **150** | | | | | | |
| | | Վիրակապեր | | | | | | | | | | |
| 2 | 33141111 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10 | տուփ | 60 | 300 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | |
| 3 | 33141111 | Բակտերիցիդ սպեղանի | Առաջին բուժ. օգնության հիպոալերգիկ, 10*20սմ | հատ | 350 | 1750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | |
| 4 | 33141115 | Բամբակ / 50գ/ 100% | Բուսական նուրբ սպիտակ թելերի փունջ, որ ստացվում է բամբակենուց: | տուփ | 150 | 750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | |
| | | Ընդամենը | | | | **2800** | | | | | | |
| | | Դեղագործական արտադրանք, բժշկական սպառման առարկաներ | | | | | | | | | | |
| 5 | 33631250 | Սպիրտ բժշկական 96% 5լ | էթանոլ d08ax08, v03ab16, v03az01; հեղուկ սպիրտ 96% 5լ | հատ | 8000 | 32000 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | 1 | 1 | 1 |
| 6 | 33631230 | Բետադին 10% 30ml | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | սրվակ | 950 | 1900 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | |
| 7 | 33631430 | Դեկսալգին փոշի 25մգ | Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17: Ցավազրկող, դեղափոշի 25mg | տուփ | 240 | 1200 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 33661121 | Ասպիրին ուպսա , վիտամին C 500մլ /10 հատ/ | Ացետիլ սալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01 Ասպիրին ուպսա, վիտամին C 500մլ /16 հատ/ | տուփ | 1750 | 1750 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 9 | 33661126 | Ցիտրամոն 500մգ Sopharma /10 հատ/ | Ացետիլ սալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA51, N02BA71: Անալգետիկ, արյունը ջրիկացնող, ջերմիջեցնող, հակաբորբոքային դեղամիջոց: Օգտագործում են գլխացավի և հարբուխի ժամանակ: | տուփ | 100 | 100 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 10 | 33661119 | Անալգին 500մգ Sopharma /20 հատ/ | Մետամիզոլ /մետամիզոլ նատրիում/, տրիացետոամին 4-տոլուենսուլֆոնատ N02BB72; Ցավազրկող, դեղահաբ 500 մգ Sopharma կամ համարժեք | հատ | 360 | 360 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 11 | 33661122 | Պարացետամոլ 500մգ Sopharma /20 հատ/ | Պարացետամոլ n02be01, անիլիդների խմբի ցավազրկող, ունի ջերմիջեցնող հատկություն Sopharma կամ համարժեք | հատ | 360 | 360 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 12 | 33611200 | Իմոդիում 20մգ/20 հատ/ | Լոպերամիդ a07da03 Օժտված է հակափոր լուծության էֆեկտով: Կազմի մեջ մտնող լոպերամիդն օպիոիդային ռեցեպտորների ընտրողական սինթետիկ արգելակիչ է: 20մգ | հատ | 2900 | 2900 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 13 | 33611170 | Նոշպա 40մլ 100հատ | Դրոտավերին a03ad02, Սպազմալիտիկ միջոց, ունի հարթ մկանահյուսվածքի հզոր սպազմալիտիկ ազդեցություն | տուփ | 2800 | 2800 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 14 | 33691232 | Նիմեսիլ 2գրամ | Նիմեսուլիդ M01AX17, M02AA26: Հակաբորբոքային, ցավազրկող միջոց 2գր | հատ | 140 | 700 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 33621270 | Կորվալոլ 25մլ | Ա-բրոմոէզովալերային թթու էթիլային էթերը `1 մլ կաթիլներով՝ 20 մգ, 1 դեղահատում ` 8,2մգ; Ֆենոբարբիտալ ` 1մլ կաթիլներով՝ 18,26 մգ, 1 դեղահատում `7,5մգ; Անանուխի յուղ: 1.42մգ 1 մլ կաթիլներ, 0.58 մգ 1 դեղահատ: | հատ | 200 | 200 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 16 | 33661117 | Վալերիանի էքստրակտ 20մգ 50հատ/կանաչ | Կատվախոտի հանուկ N05CM09 | տուփ | 400 | 400 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| 17 | 33631240 | Քլոր | Դիմաքս քլորի լուծվող հաբեր 3,7 գրամ | հատ | 70 | 42000 | 600 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 97 | 160 | 110 | 233 |
| 18 | 33631290 | Իզիգել 40 գր | Ակտիվ նյութ՝ Իբուպրոֆեն, Օժանդակ նյութեր ` իզոպրոպիլ սպիրտ, դիզոպրոպա նոլամին, պոլիէթիլենգլիկոլ, կարբոմեր, մենթոլ և զտված ջուր: | հատ | 3550 | 3550 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| | | **Ընդամենը** | | | | **90220** | | | | | | |
| | | **Ընդամենը** | | | | **93170** | | | | | | |

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը `7 աշխատանքային օրվա ընթացքում :

**ԳՆՈՐԴ**

«Ընտանիք»ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մինասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հերմո ֆարմ» ՍՊԸ
Ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1
ՀՎՀՀ 05522575
Հ/Հ 2050122054441001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ.Հոլյան

/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված N 2*
*«19» փետրվարի 2021 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | միջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | Փետրվար մայիս | Մարտ հունիս | Ապրիլ հուլիս | Մայիս օգոստոս | Հունիս սեպտեմբեր | Հուլիս հոկտեմբեր | Օգոստոս նոյեմբեր | Սեպտեմբեր դեկտեմբեր | Հոկտեմբեր դեկտեմբեր | Նոյեմբեր դեկտեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 2440000 | **Ազոտ պարունակող պարարտանյութեր** | 150 | 150 | 150 | 150 | 150 | 150 | 150 | 150 | 150 | 150 | 150 | **150** |
| 2-4 | 3310000 | **Վիրակապեր** | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | 2800 | **2800** |
| 5-18 | 3360000 | **Դեղագործական արտադրանք** | 31010 | 31010 | 50210 | 50210 | 50210 | 65910 | 65910 | 65910 | 90220 | 90220 | 90220 | **90220** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳՔ
Տնօրեն՝ Ա.Մինասյան

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«Հերմո ֆարմ» ՍՊԸ
Ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1
ՀՎՀՀ 05522575
Հ/Հ 2050122054441001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ.Հոլյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«19» փետրվարի 2021 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

Գտնվելու վայրը ______________
հհ ________________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

Գտնվելու վայրը ______________
հհ________________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «            »20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված3.1*
*«19» փետրվարի 2021 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________________
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

*Հավելված N 3*
*«19»փետրվարի 2021թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ06/21ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| «ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ»ՍՊԸ | «Ընտանիք»ՄՊՄԿՊՈԱԿ |
| ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1 | ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 |
| հհ2050122054441001 | հհ900018005554 |
| «Ինեկո բանկ»ՓԲԸ | Երևանի թիվ 1 ՏԳԲ |
| ՀՎՀՀ 05522575 | Հվհհ05504412 |
| Տնօրեն՝ | Տնօրեն՝ |
| Հ. Հլոյան________ | Ա. Մինասյան________ |
| Կ.Տ | Կ.Տ. |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«23»«փետրվարի» 2021թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պետության կարիքների համար մատակարարման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «19» «փետրվարի» 2021թ.
Պայմանագրի համարը՝ ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «23» «փետրվարի» 2021թ. Դուրս գրված NԲ5871066390 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1. | Սպիրտ բժշկական 96% 5լ | էթանոլ d08ax08, v03ab16, v03az01; հեղուկ սպիրտ 96% 5լ | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 8.00 | 31.05.21 |
| 2. | Անուշադիրի սպիրտ 10% 30մլ | Անուշադիրի սպիրտ 10% 30մլ | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 0.15 | 31.05.21 |
| 3. | Բետադին 10% 30ml | պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | 2 | 2 | 26.02.2021 | 23.02.21 | 1.90 | 31.05.21 |
| 4. | Կորվալոլ 25մլ | Ա-բրոմէզովալերային թթու էթիլային էթեր `1 մլ կաթիլներով՝ 20 մգ, 1 դեղահատում `8,2 մգ; Ֆենոբարբիտալ `1 մլ կաթիլներով՝ 18,26 մգ, 1 դեղահատում '7,5 մգ; Անանուխի յուղ: 1.42 մգ 1 մլ կաթիլներ, 0.58 մգ 1 դեղահատ: | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 0.20 | 31.05.21 |
| 5. | Իմոդիում 20մգ/20 հատ/ | Լոպերամիդ a07da03 Օժտված է | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 2.90 | 31.05.21 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հակափորլուծության էֆեկտով: Կազմի մեջ մտնող լոպերամիդն օպոիդային ռեցեպտորների ընտրողական սինթետիկ արգելակիչ է: 20մգ | | | | | | |
| 6. | Անալգին 500մգ Sopharma /20 հատ/ | Մետամիզոլ /մետամիզոլ նատրիում/, տրիացետոամին 4-տոլուեննսուլֆոնատ N02BB72; Ցավազրկող, դեղահաբ 500 մգ Sopharma կամ համարժեք | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 0.36 | 31.05.21 |
| 7. | Պարացետամոլ 500մգ Sopharma /20 հատ/ | Պարացետամոլ n02be01, անիլինդների խմբի ցավազրկող, ունի ջերմիջեցնող հատկություն Sopharma կամ համարժեք | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 0.36 | 31.05.21 |
| 8. | Նոշպա 40մլ 100հատ | Դրոտավերին a03ad02, Սպազմալիտիկ միջոց, ունի հարթ մկանահյուսվածքի հզոր սպազմալիտիկ ազդեցություն | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 2.80 | 31.05.21 |
| 9. | Նիմեսիլ 2գրամ | Նիմեսուլիդ MO1AX17, MO2AA26: Հակաբորբոքային, ցավազրկող միջոց 2գր | 5 | 5 | 26.02.2021 | 23.02.21 | 0.70 | 31.05.21 |
| 10 | Ցիտրամոն 500մգ Sopharma /10 հատ/ | Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA51, N02BA71: Անալգետիկ, արյունը ջրիկացնող, ջերմիջեցնող, հակաբորբոքային դեղամիջոց: Օգտագործում են գլխացավի և հարբուխի ժամանակ: | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 0.10 | 31.05.21 |
| 11. | Կատվախոտի երեկոյան էքստրակտ 20մգ 50հատ /կանաչ | Կատվախոտի հանուկ N05CM09 | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 0.40 | 31.05.21 |
| 12 | Իզիգել 40 գր | Իզի գել 60 գր | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 3.55 | 31.05.21 |
| 13 | Ասպիրին ուպսա , վիտամին C 500մլ /10 հատ/ | Ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01,Ասպիրին ուպսա, վիտամին C 500մլ /16 հատ/ | 1 | 1 | 26.02.2021 | 23.02.21 | 1.75 | 31.05.21 |
| 14 | Դեկսալգին փոշի 25մգ | Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17: Ցավազրկող, դեղափոշի 25mg | 5 | 5 | 26.02.2021 | 23.02.21 | 1.20 | 31.05.21 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Բամբակ / 50գ/ 100% | Բուսական նյութ սպիտակ թելերի փունջ, որ ստացվում է բամբակենուց: | 5 | 5 | 26.02.2021 | 23.02.21 | 0.75 | 31.05.21 |
| 16 | Դիմաքս քլորի լուծվող հաբեր 3,7 գրամ | Դիմաքս քլորի լուծվող հաբեր 3,7 գրամ | 97 | 97 | 26.02.2021 | 23.02.21 | 6.79 | 31.05.21 |
| 17 | Բակտերիցիդ սպեղանի | Առաջին բուժ. օգնության հիպոալերգիկ, 10*20սմ | 5 | 5 | 26.02.2021 | 23.02.21 | 1.75 | 31.05.21 |
| 18 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10 | 5 | 5 | 26.02.2021 | 23.02.21 | 0.30 | 31.05.21 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ստորագրություն

Հ. Հյոլյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

Ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 22 | Փետրվար | 2021 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 23 | Փետրվար | 2021 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 5871066390 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | |

| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
|---|
| |
| [7.1] ՀԴՄ կտրոնի համար |
| |

## Արտադրանք, ապրանք առաքող անձ

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 5 5 2 2 5 7 5 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [10] Անվանումը | ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [11] Բանկային տվյալները | Ինեկո բանկ | N 2050122054441001 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Հաղթանակի 42Ա 1 | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ԳՅՈՒՄՐԻ Հաղթանակի 42Ա 1 | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

| | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 5 5 0 4 4 1 2 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԸՆՏԱՆԻՔ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | |
| [18] Բանկային տվյալները | Արարատբանկի Գյումրու մ/ճ | N 1510036776310100 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |

| | | | |
|---|---|---|---|
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | ինքնաառաքում | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2 | | |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Տարա | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Սպիրտ բժշկական 96% 5000մլ | ֆլ | 1 | 8000 | | 8000 | | | |
| 2 | Անուշադիրի սպիրտ 10% 30 մլ | ֆլ | 1 | 150 | | 150 | | | |
| 3 | Բետադին 10% 30 մլ | ֆլ | 2 | 950 | | 1900 | | | |
| 4 | Կորվալոլ 25 մլ | ֆլ | 1 | 200 | | 200 | | | |
| 5 | Իմոդիում 20մգ N 20 | տուփ | 1 | 2900 | | 2900 | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Անալգին 500մգ N 20 | տուփ | 1 | 360 | | 360 | | | |
| 7 | Պարացետամոլ 500մգ N 20 | տուփ | 1 | 360 | | 360 | | | |
| 8 | Նոշպա 40 մգ N100 | տուփ | 1 | 2800 | | 2800 | | | |
| 9 | Նիմեսիլ 2գրամ N 1 | տուփ | 5 | 140 | | 700 | | | |
| 10 | Ցիտրամոն 500մգ N 10 | տուփ | 1 | 100 | | 100 | | | |
| 11 | Կատվախոտի երեկոյան էքստրակտ 20 մգ N 50 | տուփ | 1 | 400 | | 400 | | | |
| 12 | Իզի գել 40 գ | տուփ | 1 | 3550 | | 3550 | | | |
| 13 | Ասպիրին ՌԻՊՄԱ N 10 | տուփ | 1 | 1750 | | 1750 | | | |
| 14 | Դեկսալգին փոշի 25մգ N 1 | տուփ | 5 | 240 | | 1200 | | | |
| 15 | Բամբակ / 50գ/ 100% | տուփ | 5 | 150 | | 750 | | | |
| 16 | Դիմաքս քլորի լուծվող հաբեր 3,7գ | հատ | 97 | 70 | | 6790 | | | |
| 17 | Բակտերիցիդ սպեղանի 10X20սմ N 1 | հատ | 5 | 350 | | 1750 | | | |
| 18 | Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10 | տուփ | 5 | 60 | | 300 | | | |
| **Ընդամենը** | | | | | | 33960 | X | | |

Առաքող՝ IVANYAN ARTUR 2809710279 (անունը, ազգանունը)

Ստացող MINASYAN ARTUR 2505620598 (անունը, ազգանունը)

22/02/2021 19:35:25

23/02/2021 19:00:57